



«ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.» ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԺԸ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆՈՒԱՐ 1, 1889

ԹԻԻ 1



ՓԵՍԱՅԻՆ ՓՐԿԱՆՔԸ

Մեր առջևի պատկերը կը ներկայացունէ ամուսնական հանգէտի արտաքոյ կարգի սովորութիւն մը: Գաղթացի գիւղականը և իւր հարսը կը դառնան եկեղեցիէն ուր քահանան անուանած է զանոնք մէկ մարմին: Անոնք կը քայլեն ձեռք ձեռքի տուած, իրենց երեսները կը փայլին երջանկութեամբ, և անոնց մարտիր և փայտոյ հանդերձները զարդարուած են պարծառ ծաղիկներով, և ահա յանկարծ կը կենան: Անշուշտ չեն ինկած

ՓԵՍԱՅԻՆ ՓՐԿԱՆՔԸ

թնամեաց ձեռքը, փասն զի անոնց ուրախութիւնը կ'անդրադառնայ հանգիստականաց զուարթ գէւեքերէն, և հրացաններ, ատրճանակներ, թմբուկներ և փողեր կ'արտայայտեն անոնց բարեկամներուն բարձրաձայն խնդակցութիւնները, բայց անոնց ճամբուն առջև պարան մը քաշուած է, և ձեռք մը կ'երկնայ, որուն նշանակութիւնը լաւ գիտէ փեսան: Նա արգէն իւր մատը դրած է արծաթ ստակի մը վրայ, զոր ապրով կը վերնայ իրենց առ-

ջև գտնուող այն արգելքը. այնուհետև թմբուկն ու փողը աւելի բարձր կը հնչեն և հարսն ու փեսան յառաջ կը քայլեն երթալ տուն: Անոնք իրենց առջևը պիտի գտնեն ուրիշ արգելքներ ալ մինչ ի միասին յառաջ կ'ընթանան այս կեանքին մէջ. բայց ստակը չկրնար վերցունել անոնց ամէն ալ: Մակայն եթէ ձեռք ձեռքի տուած քայլեն փոխադարձ սիրով, յուսալից արտով և առ Աստուած հաւատով, բնաւ արգելք մը անյաղթելի պիտի չըլլայ:

Այս երկրին ամուսնութեան հանգէաներն արդէն սկսած ըլլալով մենք մեր անկեղծ խնդակցութիւնները կը մատուցանենք թէ՛ քաղաքի թէ՛ գիւղի մէջ բնակող որ և իցէ անձանց որ պիտի մոնեն ամուսնական առնչութեան մէջ: Մենք չենք ուզեր շատ ընդմիջել ձեր ուրախացից ճամբան եկեղեցիէն դէպի տուն, սիրելի՛ բարեկամք, բայց միայն այնչափ ժամանակ որ միջոց ըլլայ հարցնել ձեզ թէ աղէկ չըլլար որ ձեր ամուսնական կեանքը սկսիք ըն-


ուաջ գնաց և քիչ տարիներ ետքը այնպէս բարձրացաւ իւր դիրքը որ յաջողեցաւ ըլլալ աէր նաւու մը և վաճառականութիւն կ'ընէր: Բայց երբ քսանևութ տարեկան եղաւ, թողուց վաճառականութիւնը և մտաւ Բրիտանեան նաւատորմին մէջ: Գոհ չեղաւ հասարակ պաշտօնեայ մը ըլլալէ, և ուստի նուիրեց ինքզինք սորվելու նաւուղուութեան և աստեղագիտութեան

բոլորովին զատ էր թասմանիայէ և Նոր կուինէայէ, և գրաւեց Աւստրալիոյ ծովերը Անգղիոյ թագաւորին կողմանէ: Շատ ուրիշ երկիրներ ալ գտաւ, որոց կարգէն են Սանտուիչ կղզիք, և անոնք կոչեց Անգղիացի Սանտուիչի կոմսին անունովը: Երբ երկրորդ անգամ այցելեց այս կղզիները, բնիկք գողցան անոր նաւակներէն մին, և Գուք քանի մը ընկերներով կղզին ե-



ԳՈՒՔ ՆԱՒԱՊԵՏ

դուներով ձեր տուններուն մէջ այս փոքրիկ թերթը և անոր մեծ եղբայրը՝ շաբաթական Աւետարեբը:



ԳՈՒՔ ՆԱՒԱՊԵՏ

Անգղիա է մեծ նաւապետաց և երկրախոյզներու երկիր, և անոնց ամենէն համբաւաւորներէն մին էր Գուք նաւապետ: Սա էր աղքատ գործաւորի մը որդի. և երբ տասներեք տարեկան էր, աշակերտ դրուեցաւ արհեստաւորի մը քով, բայց իւր վարպետին հետ կուի ընելով՝ ելաւ անոր քովէն և նաւու մէջ ծառայութիւն ընելու մտաւ: Գուք արագ արագ յա-

ուսումները: Ղրկուեցաւ Ամերիկա և հրատարակեց հոն Նիւ Ֆրանսիսկոյնի և Լապրատորի ծովեզրներուն աշխարհացոյցները, նաև արևու խաւարման մը վրայ իւր զննութիւնները և դիտողութիւնները: Անոր այս գործերուն մէջ սեսնուեցաւ այնպիսի ճշգրտութիւն որ նա բաւական համբաւ ստացաւ իր և աստեղագէտ: Այս համբաւին վերայ հրամանատար կարգուեցաւ երկրախոյզ մարմնոյ մը որ պիտի ղրկուէր զննել Արուսեակ մտրոպակին անցքը: Այս երեւոյթը հնար էր սեսնել խաղաղական Ովկիանոսէն միայն: Գուք նախ գտաւ որ Աւստրալիա


լաւ միտքը զննելով ձերբակալել թագաւորը և պահել իւր քովը մինչև որ դարձեալ յանձնուէր նաւակը: Ասոր վրայ կուի ծագեցաւ, որուն մէջ Անգղիացիք ստիպուեցան ետ քաշուիլ, և Գուք նաւապետ որ ամենէն ետքը մնացած էր ետ քաշուողներուն մէջ, ինկաւ գետին՝ ծանր հարուած մը ընդունելով ետևի կողմէն, և թէպէտ դարձեալ ոտքի վրայ ելաւ, շուտով բռնուեցաւ բնիկներէն, և սպաննուեցաւ: Այս դէպքը պատահեցաւ 1779 ին, առաջին անգամ Ամերիկացի միսիոնարներուն այն կղզիներն երթալէն ճիշդ 40 տարի առաջ:



ՓԵՆԿՈՒՆ

Հարաւային Ովկիանոսի մէջ կը գտնուի տեսակ մը շատ հետաքրքրաշարժ թռչուն, որ Անգղիերէն կը կոչուի փէնկուին և Գաղիերէն՝ Մանչօ: Բնւորովին անկարող է թռչելու, վասն զի անոր թևերը անփետուր են և աւելի նման են կէտ ձկան թևերուն քան թռչնոց թևերու: Ջրին մէջ այս թևերը շատ յարմար թիակներ են, և փէնկուինք կը լողան արագ և վայելուչ:

Փէնկուինի քանի մը տեսակներ կան: Պատկերին մէջ ցուցուածը կը ճանչցուի թագաւոր փէնկուինաց անունով, որ կ'երկնայ մինչև 44 մատնաչափ, և բաւական մեծ է բաղերէն և սաղերէն, որ մեզի ընտանի ամենէն մեծ ջրային թռչուններն են: Թագաւոր փէնկուինաց կոչուած տեսակին կրօնակը հերձաքարի (գրի քար) գոյն ունի և փորին տակը ճերմակ է, թէպէտ այս զանազանութիւնը լաւ չերեւիր մեր պատկերին մէջ: Այս թռչունին նորը փետուրները շատ կակուղ են և մեծ յարգ ունին, վասն որոյ մարդիկ, որպէս զի ձեռք բերեն զայն, մտ ժամանակներս փէնկուին կը սպաննեն մեծ թուով: Փէնկուինները չարաչար կը խածնեն զմարդիկ եթէ հանդիպին անոնց այն կողմերուն մէջ որոնց վրայ շինուած են իրենց բոյները: Խուփ մը Անգղիացի նաւաստիներ որ փոքր կղզի մը ելան գրաւել զայն յանուն վիթթորիա թագուհոյն, այնպէս սաստիկ յարձակում կրեցին յիշեալ թռչուններէն որ շատ ուրախ եղան երբ անոնցմէ ազատուելով կորցան ետ դառնալ իրենց նաւակները, թողով թռչունները բացարձակ տեր կղզոյն:



ՓՈՒՔՐԻՎ ՏՂԻՆ ՊԱՏԳԱՄԸ

Ասկէ ժամանակ մը առաջ երկու փոքրիկ տղաք մէկտեղ խաղալէ ետքը տուն կ'երթային: Շատ զուարթ բնաւորութիւն ունէին անոնք ուրիշ տղոց պէս, և երբ կեցան խաղալ փոքրիկ տան մը առջև, բարձր ձայներ հանեցին: Ճիշդ նոյն ժամանակը մարդ մը ելաւ անէն դուրս, և քաղցրութեամբ ըսաւ անոնց. «Տղաք, կը հաճի՞ք քիչ մը հանգարտ կենալ: Այս տան մէջ խեղճ կին մը կայ շատ հիւսանդ և մեռնելու մտ, և կը վախնամ թէ ձեր ձայները նեղութիւն պիտի տան անոր:»

Տղաքը մտիկ ըրին մարդուն խօսքը որ այնպէս քաղցրութեամբ ըսաւ, և խելոյն կտրեցին իրենց ձայնը: Եւ մինչ հանդարտութեամբ կ'երթային այն տեղէն, տղոց մին ըսաւ միւսին. «Չարի, արդեօք այդ տիկինը մեռնելու պատրաստ է: Օ՛ն, երթանք ետ և տեսնենք զնա:»

Չարի հաւանեցաւ և տղաքը ետ դարձան: Քաղցրին դէպ ի յիշեալ տունը, և երբ դրան զանգակը հնչեցունելու վրայ էին, անոնց քաջութիւնը գնաց, և սկսան ետ դէպ ի իրենց տուններն երթալ: Բայց չհանեցան իրենց ըրածին: Միաբանեցան կրկին դառնալ ետ և ելլել մօտը գանուած ծառաստանը և փորձել թէ չեն կորնար արդեօք ներս մտնել ետևի կողմէն: Տան առաջին յարկը հաւասար բարձրութիւն ունէր դուրսի բակին հետ, այնպէս որ կայնելով հոն հնար էր նայլը ուղղակի պատուհանէն ներս: Չարի ներս նայեցաւ կտորած ապակիի մը մէջէն, և տեսաւ ծածկոց մը անկողնին քով որուն վրայ պառկած էր հիւանդ կինը: Այնուհետև իւր բերանը դրաւ ծակին մէջ, և տղաքակեց բարձր ձայնով. «Հիւանդ կին, հաւատա Տէր Յիսուս Գրիստոսին, ու



ՓԵՆԿՈՒՆ

պիտի փրկուիս դուն:» Յետոյ տղաքը վազեցին մէկգի: Արդ, այս հիւանդ կինը Գրիստոսնայ էր, բայց ճիշդ այն ժամանակը մեծ շիտթութիւն կար աւտոր մտաց մէջ: Սասանան փորձութիւն դրած էր անոր առջևը, և ջանացած էր անոր խորհել տալ թէ ինք էր այնպէս խեղճ և անպիտան արարած մը, և այնչափ քիչ օգտակար եղած էր որ և իցէ մէկու մը, որ անկարելի էր իրեն փրկուիլ: Կնոջ խելքը զուլին եկաւ երբ լսեց Չարիի ձայնը, և յետոյ իւր մէկ բարեկամին ըսաւ թէ իրեն հրեշտակի ձայնի պէս թուեցաւ այն: Եւ Սուրբ Գիրքին յիշեալ խօսքերը ճիշդ այն խօսքերն էին զորոնք լսելու մեծ պէտք ունէր տիկինը: Անոնք փարատեցին անոր բոլոր տարակոյսները և երկիւղները, և կատարելապէս հանգիստ և երջանիկ ըրին զնա:

ՄՇԿԱՏԻՏԵՈՒՆ

Մշկատիտեոն որ Միացեալ Նահանգաց հարաւային մասին մէջ կը գտնուի, նման է կոկորդիլոսի՝ միայն սա տարբերութեամբ որ անկէ փոքր է:

Մշկի նեխուի խմբադրաց մին հետագայ կերպով կը նկարագրէ ողջ կղզի մը որ երբեմն կը ձևանայ մշկատիտեոին կռնակը:

Մշկատիտեոը բնաւ սիրելի երևոյթ ունեցող կենդանի մը չէ: Ընդհակառակն շատ զգուելի և սոսկալի է իւր կերպարանքով և բնաւորութեամբ: Բայց գոնէ մէկ նկատումով նախանձելի է. իւր բոլոր կենաց մէջ բնաւ կարօտ չէ ատամնաբուծի, բայց եթէ զնա ուտելու համար, վասն զի անոր ակուններն այնչափ երկար աստեն չեն մնար անոր բերնին մէջ որ միջոց ըլլայ փտելու կամ ցաւելու կամ արելու որ և իցէ կերպով: Երբ մշկատիտեոին ակուն կը մաշի կամ կը կտորի, կամ պէտք կ'ունենայ որ և իցէ նորոգութեան, կ'իյնայ, և, անհա՛նոր ակունք մը պատրաստ է անոր տեղը գրաւելու: Բայց անչուտ մշկատիտեոին ակունները անոր միայն հաճոյք կու տան:

Մշկատիտեոին ուրիշ մասնաւոր մէկ յատկութիւն է իւր քնանալու կարողութիւնը: Նման ուրիշ մողեսներու այնչափ պաղ է արիւնը որ կենդանին կը սիրէ տաքը և կ'աւտէ ցուրտը: Ջրի ալ պէտք ունի, և որովհետև Ֆլորիտայի մէջ չոր եղանակը և զով եղանակը մէկտեղ կը հանդիպին, ուրեմն երկու պատճառ կայ թէ ինչու համար Ֆլորիտայի մշկատիտեոը ձմերանոց կը քաշուի: Կը թաղէ ինքզինք տղմի մէջ, ինչպէս սովոր են անոր տեսակէն եղող մողեսները, և այնպէս կը մնայ երկար ժամանակ քուն վիճակի մէջ:

Երբեմն կը պատահի որ խոտ և շուտ աճող թուփեր կը բուսնին այս թմրած կենդանիին կռնակը: Ընդհանրապէս երբ առաջին անգամ տաք անձրևը կ'իջնէ մշկատիտեոին վրայ, կենդանին զանոնք բոլորը կը թոթուէ, և կամ հող, խոտ և այլն, կը փրթին կ'իյնան անոր կռնակէն. բայց երբեմն ալ այնպէս կը պատահի որ, տիղմը ժամանակ մը փակած կը մնայ պատճառով մը, և անոր հետ՝ նաև բուսած տունկերը. և երբ կիսով չափ արթնցած կենդանին կը մանէ շուրջ, և կը լողայ անոր երեսը, կ'երևի լողացող կղզիի նման:

Այսպիսի դէպքի մը աստեն թռչուն մը խաբուեցաւ և շինեց իւր բոյնը

մշկատիտեռնին կոնսակը բուսած տուն. կերուն վրայ: Այսպէս բեռնաւորուած կենդանի կողմին կամաց կամաց իջաւ ջրին հասանքէն վար, և քայն տեսան ձուկ որսացող տղաք: Տղաքը նայեցան որ թռչունը ելաւ այն փոքրիկ կղզիէն, և կտակածելով թէ բայն մը կը գտնուէր հոն, թողուցին իրենց ձկնորսութիւնը և թիավարելով գէտ ի հոն ուղղեցին իրենց նաւակը:

Անոնք բնաւ չէին խորհոր թէ այն չէր հասարակ կղզի, մինչև որ մէկ երկու անգամ սաստիկ զարկին անոր իրենց մակոյկը, և այնչափ նեղացուցին մշկատիտեռը որ յանկարծ բացաւ իւր ահագին բերանը, և տղաքը ամէնքն ի միասին ստակումով ձիւներ արձակեցին և փախան մէկդի, մեծապէս համակրելով թռչունին որ կը թռչտէր անոր քովերը և ողորմագին կ'աղաղակէր:

Իտեղծ թռչունը պիտի զրկուէր իւր բոյնէն, վասն զի մշկատիտեռը վերջապէս բոլորովին արթննալով, հասկըցաւ որ շատ անօթեցած էր, և ջրին մէջ ընկզմեցաւ կերակուր փնտաելու համար: Այսպէս շուրջ թափեցաւ կղզին, բոյնը և ամէն բան:

Ա. Գ. Բ. Տ. Տ. Ա. Յ. Բ.

Տարբ տարեկան տղայ մը անգամ մը կը քայլեր ծանր սայլ մը որուն մէջ լեցուած էին քակուած շէնքի մի տախտակներէն: Յողմած և ուժի հասած կեցաւ հովանաւոր ծառի մը ներքեր: Տղին ոտքերը վերաւորուած և ճմլուած էին. հանդերձները պատառ պատառ. երեաները տփոյն էին և ինք իւր եղածէն շատ տարի մեծ կ'երևէր: Պառկեցաւ խոտին վրայ, և հինգ վայրկենէն ինկաւ խորունկ քնոյ մէջ: Անոր բոպիկ ոտքերը փողոցի քարերուն դպած էին և իւր հինգած գլխարկը ինկած էր գլխէն և զըրբելով գայած էր ճամբուն վրայ: Կրտսին այն հովանայն տակը, տղին երեսը նայելով ամէն անցնող կը հասկնար թէ ինչ վիճակներէ անցած էր նա: Կը հասկնար թէ քիչ ուտելիք կը գտնէր նա, թէ գիշերները ցրտէն կը սարսուար անոր մարմինը, թէ այնպիսի բնակարան մը կը կենար ուր արևու լոյս չէր ծագեր, և իւր այն մատաղ հասակին մէջ ծաղրելի կերպարանք մը ունեցած էր:

Այդ միջոցին հետաքրքրական բան մը պատահեցաւ: Գործաւոր մարդ մը, տարօրինակ ծերունի մը, իւր ձեռքը փայտ կտրելու սրոցով, այն փողոցէն կ'անցնէր և կու գար փայրկեան մի հանգչիլ մի և նոյն հովանայն ներքև: Տեսաւ տղան և մէկդի դարձաւ. բայց կրկին նայեցաւ անոր վրայ, և հիմա հասկցաւ թէ այն տղին ինչ բաներ պատահած էին: Ինքն ալ գիտէր թէ ինչ էր ցրտէն սարսուար և անօ-

թի մնալ: Ոտք ելաւ լաւ մը նայիլ արդին վրայ, և յետոյ իւր գրպանէն հանեց կտոր մը հաց և միս, իւր ուտելիք կերակուրը, և գրաւ գտնուեց տղին քով: Յետոյ անհոգ կերպով գնաց մէկդի, ստէպ ստէպ ետին նայելով, բայց հոգ տանելով որ տղին տէքին չերևի, իբր թէ չուզելով որ տղան շնորհակալ ըլլար անկէ: Մարդիկ, կանայք և տղաք տեսած էին բոլոր այս բաները: Եւ այսպիսի տեսարան մը ինչ ներքործութիւն ըրաւ անոնց վրայ: Մարդկային ամէն հոգոյ մէջ կը գտնուի մարդասիրութիւն և ազնիւ հանգամանք, բայց երբեմն բանալի մը պէտք կ'ըլլայ դանոնք բանալու համար: Մարդ մը որ կ'անցնէր անկէ, խոտութեամբ դէպ ի տղին կողմը և կէս տուր դրաւ միւս աղքատ մարդուն գըրած հացին քով: Բարի կին մը եկաւ և լաւ գլխարկ մը դրաւ տղին հինցած գլխարկին տեղը: Փոքր տղեկ մը բերաւ զոյգ մը կոշիկ, և մեծ տղայ մը վերարկու մը և բաճկոն մը: Ուրիշներ կեցան, իրարու հետ շնորհեցին, և խոշոր և մանր ստակներ ձգեցին առաջին արծաթ ստակին քով: Տփոյն երեսով այն տղան իսկոյն արթնցաւ և ցատկեց վեր իբր թէ ոճիւր մը դործած ըլլալով հոն քնանալուն համար: Տեսաւ հացը, հանդերձները, ստակները, և բաւական բազմութիւն մը որ կը սպասէին անոր շուրջը թէ ինչ պիտի ընէր նա: Գիտէր ինք թէ քնացած էր, և հասկցաւ որ այս բոլոր բաները եկած էին իրեն՝ ճիշդ իւր երազ տեսած ատենը: Այն ատեն ինչ ըրաւ: Կատաւ, և երեսը ծածկելով ձեռքերուն մէջ, սկսաւ հեկեկալով լալ:

ՇՓՈԹԻՉ ԽՆԴԻՐՆԵՐ

Միշտ իրենց զբօսանք ըրած են դպրոցի տղաք առաջարկել իրենց վարձատրութիւն մասթեմաթիքական դրժուարին ինդիքներ որոց պատասխան չկրնայ տալ նա: Սովորաբար քիչ կարևորութիւն ունեցող բաներ են այս ինդիքը կամ առաջարկութիւնը, և դանտից առաջարկելուն նպատակն է լոկ ընդունել անհեթեթ պատասխաններ վարձատրութեան կամ այն անձերէն որոց կ'առաջարկուին ինդիքները: Թէպէտ անուն լրագիրը կը հրատարակէ այսպիսի ինդիքներ որոց ոմանք նոր են և ոմանք շատ հին, բայց թերևս նոր դպրոցի տղայոց և աղջկանց ոմանց:

Եթէ սագ մը կը կռէ տասը լիտր և իւր ծանրութեան կէսը, ինչ է սագին ծանրութիւնը: Ո՞վ փորձուած չէ պատասխանել անմիջապէս, Տասն ուհինգ լիտր, — հարկաւ ուղիղ պատասխանը պարտի ըլլալ քսան լիտր: Յիբաւի զարմանալի է որ պարզ հարցում մը երբեմն չփոթեցունէ իմաստուն մարդը: Բայց հետևեալներն ալ երբեմն չփոթեցուցած են: Գանձի՞ որ պէտք է կտրելով հատցունելու համար յիսուն կանգուն աս-

ուին՝ ամէն օր մէկ կանգուն կտրելով անկէ:

Խոլունջ մը կ'ելլէ քսան ոտք բարձր ձողի մը վրայ, ամէն օր ցերեկը հինգ ոտք վեր ելլելով, և գիշերները չորս ոտք վար սահելով: Խոլունջը օրջափ ժամանակէն կրնայ հասնիլ ձողին գագաթը:

Իմաստուն մարդ մը որ պատուհան մը ունէր մէկ կանգուն բարձր և մէկ կանգուն լայն, ուղիղ աւելի լոյս ընդունել սենեկին մէջ, առջինին կրկնապատկին չափ մեծցուց պատուհանը, սակայն պատուհանը տակաւին միայն մէկ կանգուն բարձրութիւն և մէկ կանգուն լայնութիւն ունէր: Ինչ կերպով մեծցուցած էր պատուհանը:

Այս չփոթիլ խնդիր մըն է երկրաչափութեան, ինչպէս նախընթացները չփոթիլ խնդիրներ էին թուաբանութեան: Պատուհանին առջի ձեռք էր հակեալ գիբքով քառակուսի դորմարդը յետոյ ըրաւ հորիզոնական խորսիւով քառակուսի:

Գտլով առջի երկու խնդիրներուն, թերևս հարկ անգամ չէ ըսել որ առաջնոյն պատասխանը ոչ թէ յիսուն այլ քառասունեկին օր է: Եւ երկրորդինը՝ ոչ թէ քսան, այլ տասնև վեց օր, վասն զի խոլունջը որ տասնևհինգ օր ամէն օր մէկ ոտք կը շահի, տասնևվեցերորդ օրը կը յաճողի ելլել ձողին գագաթը և հոն կը մնայ:

Մարդ մը կը քայլէ ձողի մը բոլոր տիքը, որոյ գագաթը նստած է կապիկ մը: Գանձի որ մարդը կը քայլէ, կապիկն ալ կը շարժի ձողին գագաթը այնպէս որ երես երեսի գայ մարդուն հետ: Հարցում. Երբ մարդը քայլելով դառնայ ձողին բոլորտիքը, կապիկին ալ բոլորտիքը դարձած կ'ըլլայ թէ ոչ:

Պատասխանը որ առաջին նայուածքով շատերու պիտի երևի, այս է թէ մարդը դարձած չէ կապիկին բոլորտիքը քանի որ բնաւ անոր ետևի կողմը գտնուած չէ: Բայց ուղիղ պատասխանն այս է որ մարդը դարձած է կապիկին բոլորտիքը՝ քանի որ դարձած է ձողին բոլորտիքը:

ՀԱՐՑՈՒՄ ՄԸ

Չոր կ'առաջարկէ փոքր տղայ մը (Արմենակ Ա. Ասատուրեան) տասնէն վեր տարիք չունեցող մանկանց, թէ Սուրբ Գրոց մէջ առաջին անգամ ո՞ր յիշուած է ուն բառը, Հարկ չկայ պատասխանը գրելու մեզի:

Ամերիկայի Մետիստաց ընկերութեան կողմէն հարցումներ արձակուած են: Արտօմատէր ձ: Ռ. Ջ. Մարտի 2-ին Տնօրէն—Խմբագիր Է. Ս. Մարտի 2-ին Ճիշտանձնար եօգուշու, Ամերիկայի Մետիստաց ընկերութեան կողմէն:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՕՍԿՈՐ ՊՕՅԱՆՅԱՆ